ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/85

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացուցիչ Հ. Մանուկյանի (լիազորագիր՝ տրված 10.11.2021թ.),

քննելով ՀՀ կադաստրի կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից 04.11.2021թ. ներկայացված (05.11.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/85 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 04.11.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշան հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովի 22 սեպտեմբեր 2021 թվականի թիվ 2 արձանագրության թիվ 5 որոշման համաձայն «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23 սեպտեմբեր 2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությաբ հայտարարել է գնահատման արդյունքները՝ ըստ որի «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է ընտրված մասնակից:

Պատվիրատուն 24 սեպտեմբեր 2021թվականին տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, ըստ որի «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Սույն թվականի հոկտեմբերի 22-ին տեղեկագրում հրապարակվում է տեղեկատվություն Հայտարարություն՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ, «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին անհայտ պատճառներով:

Սույն թվականի նոյեմբերի 1-ին Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է տեղեկատվություն, թե 15 հոկտեմբեր 2021 թվականին կայացել է գնահատող հանձնաժողովի թիվ 3.1 նիստը, ըստ որի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքներ են հրապարակվել ՝ գնահատման արդյունքներով մասնակիցը՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ժամանակին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը և հաղթող մասնակից է ճանաչել «Ռեթ Նեթ» ՍՊԸ-ին: Սույն թվականի նոյեմբերի 1 –ին Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, ըստ որի ընտրված մասնակից է ճանաչվել «Ռեթ Նեթ» ՍՊԸ-ն և «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2021/272 որոշումը «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ մերժվել է անհիմն լինելու պատճառով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ փաստերին՝

Սույն թվականի նոյեմբերի 1-ին Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակված տեղեկատվությամբ գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3.1 արձանագրությամբ նշվել է, թե մասնակիցը՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ոչ թե պայմանագիրը, այլ չի ներկայացրել պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը, իսկ սույն թվականի նոյեմբերի 1-ին գնահատող հանձնաժողովի կողմից տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին անբավարար՝ հիմք նշելով մասնակցի կողմից սահմանված ժամկետում պայմանագիր չներկայացնելը:

Գնահատող հանձնաժողովը «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու համար առաջին դեպքում թիվ 3.1 արձանագրությամբ հիմք է ընդունել այն փաստը, որ մասնակիցը չի ներկայացրել «պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը», իսկ սույն թվականի նոյեմբերի 1-ին գնահատող հանձնաժողովի կողմից տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն մեջ անհամապատասխանության հիմք է ընդունել «պայմանագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու փատը»: Ներկայացրած փաստերը հակասում են միմյանց: Գնահատող հանձնաժողովը «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը առանց մերժման որոշման հաղթող մասնակից է ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ռեդ Նեթ» ՍՊԸ-ին:

Անգամ գնահատող հանձնաժողովի կողմից նախաձեռնած «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ մերժվել է անհիմն լինելու պատճառով/ընթացակարգի ծածկագիր ՍՑ-ՆԳ-2021/272/:

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախախագիծ, պայմանագրի ապահովման, որակավորման ապահովում համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման կամ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցումներ չեն ստացվել:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը չի տիրապետում գնումների մասին օրենսդրությանը և որոշումներ կայացրել է ՀՀ գնումների մասին օրենսդրության կոպիտ խախտումներով:

Հաշվի առնելով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը առանց մերժման որոշման հաղթող մասնակից է ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ռեդ Նեթ» ՍՊԸ-ին:

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու համար առաջին դեպքում թիվ 3.1 արձանագրությամբ հիմք է ընդունել այն փաստը, որ մասնակիցը չի ներկայացրել «պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը», իսկ սույն թվականի նոյեմբերի 1-ին գնահատող հանձնաժողովի կողմից տեղեկագրում հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն մեջ անհամապատասխանության հիմք է ընդունել «պայմանագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու փաստը»: Ներկայացրած փաստերը հակասում են միմյանց:

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգ մերժվել է անհիմն լինելու պատճառով/ընթացակարգի ծածկագիր ՍՑ-ՆԳ-2021/272/:

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեին գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախախագիծ, պայմանագրի ապահովման, որակավորման ապահովում համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանաուցման կամ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցումներ չեն ստացվել փաստական հանգամանքները, որ ընթացակարգը կազմակերպվել է ՀՀ Գնումների մասին օրենսդրության իրավակարգավորումների խախտմամբ, որը չի կարող մասնակցի՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ–ի հետ կապված բացասական հետևանքներ ունենալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

Գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Գնումների մասին օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ.փոփոխելու ընդունված որոշումները.

Գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝

1. Դադարեցնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշան հարցման ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի ընդունած 15.10.2021 թվականի թիվ 3.1 արձանագրության թիվ 1 որոշումը:

2. Դադարեցնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03 » ծածկագրով գնանշան հարցման ընթացակարգի 01.11.2021 թվականին տեղեկարգում հրապարակած պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

3. Պարտավորեցնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գնահատող հանձնաժողովին ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե կարիքների համար

պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշան հարցման ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին և կնքել պահնորդական ծառայությունների մատուցման պայմանագիր»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.11.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումն և հիմնավորումները.

ՀՀ կադաստրի կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 09.11.2021թ. թիվ ԳԵ/10320-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021 թվականի N Մ-30085-2021 գրության՝ կից տրամադրում ենք ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03 ծածկագրով ընթացակարգին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն հոկտեմբերի 22-ին՝ մինչ բողոքարկման նիստի կայանալը, էլեկտրոնային եղանակով Կադաստրի կոմիտեից պահանջել է ապացույց, որ իրեն ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ, ինչին ի պատասխան՝ մեր կողմից ուղարկվել է էլեկտրոնային փոստից արտատպված տարբերակը, որը՝ սակայն, նիստի ընթացքում «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն չի ներկայացրել բողոք քննող անձին (կից տրամադրվում են նաև տվյալ փաստաթղթերը):

Վերոգրյալով պայմանավորված՝ հարկ ենք համարում նշել նաև, որ Կադաստրի կոմիտեի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի N ԳԵ/9453-2021 գրությամբ բողոք քննող անձին հստակ տեղեկացվել է, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու որոշման մասին պատշաճ ծանուցվել է: Համաձայն բողոք քննող անձի կայացրած որոշման, այն է՝ Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու առաջարկի և պայմանագրի նախագծի վերաբերյալ Ընկերությանը պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը, մեր կողմից պարզաբանում ստանալու համար պետք է կիրառվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 3-րդ կետը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.11.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2021/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից իր կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստի միջոցով 30.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրությամբ արձանագրվել է, որ 30.09.2021թ. Ընկերությանն ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և տեղեկացվել է, որ պայմանագիր կնքելու ծանուցումն ստանալուն հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ներկայացնել կնքվելիք որակավորման և պայմանագրի ապահովումներ, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել, և արդյունքում որոշում է կայացվել հաղթող մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Ռեդ Նեթ» ՍՊԸ-ին:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի 04.11.2021թ. ներկայացված բողոքը, ՀՀ կադաստրի կոմիտեի 09.11.2021թ. թիվ ԳԵ/10320-2021 և 23.11.2021թ. թիվ ՄԽ/10853 գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Այսպես, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից իր կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստի միջոցով 30.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2021թ. նիստի թիվ 3.1 արձանագրությամբ արձանագրվել է, որ 30.09.2021թ. Ընկերությանն ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և տեղեկացվել է, որ պայմանագիր կնքելու ծանուցումն ստանալուն հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ներկայացնել կնքվելիք որակավորման և պայմանագրի ապահովումներ, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել, և արդյունքում որոշում է կայացվել հաղթող մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Ռեդ Նեթ» ՍՊԸ-ին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային փոստի հասցեին Պատվիրատուի կողմից համակարգի (ոչ ավտոմատ ծանուցման) կամ էլեկտրոնային փոստի միջոցով պայմանագիր կնքելու առաջարկ, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու ծանուցումներ չի ստացել:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ինչպես նաև բողոքի լրիվ բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.11.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/19025-2021 գրությամբ դիմել է ՀՀ կադաստրի կոմիտեին՝ խնդրելով տրամադրել «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով ուղարկած լինելու վերաբերյալ փաստը հավաստող ապացույցը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ կադաստրի կոմիտեն 23.11.2021թ. թիվ ՄԽ/10853-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ սույն թվականի սեպտեմբերի 30-ին «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի էլեկտրոնային փոստին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկը, և կնքվելիք պայմանագրի նախագիծը (արտատպված տարբերակը կցվում է): Ուստի համաձայն վերոնշյալ որոշման կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն համարվում է պատշաճ ծանուցված»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից վերոնշված գրությամբ տրամադրված Ընկերությանը ծանուցած լինելու փաստը հավաստող ապացույցը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը 30.09.2021թ. ծանուցել է Ընկերությանը gnumner@cadastre.am էլեկտրոնային փոստի միջոցով, մինչդեռ արձանագրում եմ հետևյալը.

Համաձայն «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարության՝ Պատվիրատուն՝ Կադաստրի կոմիտեն, հայտարարում է գնանշման հարցում, **<u>որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:</u>**

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ կետի համաձայն՝ ***<u>հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են</u>*** ***<u>համակարգի միջոցով</u>***...:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.2-րդ, 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը...:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ համաձայն Ընթացակարգի հայտարարության՝ գնանշման հարցումն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, որպիսի պայմաններում, ինչպես և սահմանվել է Ընթացակարգի հրավերով, հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն, պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը Ընկերությանը չուղարկելով էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, գործել է Ընթացակարգի հրավերով սահմանված վկայակոչված պահանջների խախտմամբ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը չի կարող համարվել պատշաճ ծանուցված:

Արդյունքում գտնում եմ, որ Պատվիրատուն էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով պետք է ծանուցի Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով ներկայացված հետևյալ պահանջին՝ «*Պարտավորեցնել ՀՀ կադաստրի կոմիտեի գնահատող հանձնաժողովին ՀՀ կադաստրի կոմիտեի կարիքների համար պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին և կնքել պահնորդական ծառայությունների մատուցման պայմանագիր*», արձանագրում եմ, որ բողոքի պահանջը սույն մասով ենթակա է մերժման, քանի որ համաձայն բողոքի քննության ընթացքում արձանագրված փաստերի՝ Պատվիրատուն պարտավորվում է պատշաճ կերպով, այն է՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով ծանուցել Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից 04.11.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝

1.1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.10.2021թ. թիվ 3.1 արձանագրությամբ կայացրած թիվ 1 որոշումը:

1.2. 01.11.2021 թվականին Տեղեկագրում հրապարակած պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**